ինձ անարժան էր համարում իրանց հասարակութեանը: Միթէ՞ դեռեւս այնքան անփորձ էի, որ չէի կարող մասնակցել նրանց խորհուրդներին: Ինչ էլ որ լինէր նրա կարծիքը իմ մասին, այնուամենայնիւ, ես ռեսի տանը պարզ նկատում էի, որ նա տակաւին սիրում էր ինձ: Որքա՜ն կարօտով նայում էր իմ վրայ, որքա՜ն դժուարութեամբ զսպում էր իրան, մի գուցէ դէմքի մի անզգոյշ ցնցումը մատներ իրան... Ո՞վ կը մտածէր հանդիպել նրան այդ լեռնային խլութեան մէջ: Ինչո՞ւ Ասլանը առաջուց ոչինչ չասաց ինձ, ինչո՞ւ չնախապատրաստեց այդ ուրախալի տեսակցութեան համար: Գուցէ ես այնքան անխոհեմ լինէի, գուցէ իմ զգացմունքները զսպել չկարողանայի, եւ երբ նիզակը ձեռին՝ վեյանձնաբար ներս մտաւ նա ռեսի սենեակը, ես նետուէի նրա գիրկը եւ սեղմէի կուրծքիս վրայ թանկագին բարեկամիս: Ես խօ դրանով շատ բան կփչացնէի... ես խօ կը մերկացնէի նրան...

Որքա՜ն փոխուել էր նա, որքա՜ն այլակերպուել էր... Ես հազիւ կարողացայ ճանաչել: Փոխուել էր ամէն ինչ, որ արտաքին էր, հագուստը, մազերը, սանրուածքի ձեւը, մինչեւ անգամ ձայնը, բարբառը: Անուափոխ պահպանուել էր նրա մէջ նախկին ջերմ, սիրող սիրտը, որի մէջ ամէն մի թշուառի համար անսահման գութ, անսահման կարեկցութիւն կար: Որքա՜ն զօրեղ եւ կախարդիչ էր նրա ազդեցութիւնը գիւղացիների վրայ, որքա՜ն յարգանքով էին վերաբերւում դէպի նա: Նա ինձ վրայ այն տպաւորութիւնն էր գործում, ինչ տպաւորութիւն գործում է գազանների ահարկու զսպողը. ամեհի առիւծը լիզում է նրա ձեռքերը, կատաղի վագրը թաւալւում է նրա ոտների տակ... Որքա՜ն ուժ եւ կամքի զօրութիւն կար նրա մէջ, որ կարողացել էր մեղմացնել, հեզացնել եւ մինչեւ անգամ ազնուացնել այդ մարդակերպ գազանների բնաւորութիւնը... Նա այժմ իր սիրած մթնոլորտի մէջն էր. այստեղ կար լեռ, անտառ, ծով եւ կենդանի աշխուժով լի ժողովուրդ: Նրա երազների ցնորքն էր՝ մի այդպիսի ժողովրդի մէջ լինել, մի այդպիսի աշխարհում գործել: Հմուտ բրուտը իր ձեռքի տակ ունէր խիստ ընտիր կաւ, նրան ինչ ձեւ որ կամենար՝ կը տար:

Նրանից շատ հեռու չէին Ոստանի աւերակները, որտեղ մի ժամանակ կանգնած էր նրա հօր հոյակապ ամրոցը, որտեղ կատարուել էին այնքան սոսկալի արկածներ... Նրանից շատ հեռու չէր Ռազմիրան գիւղը, որտեղ դրած էին նրա նախահարց պատկառելի շիրիմները: Հայրը այդ երկրի տէրն ու իշխանն էր: Որդին դարձել էր նրա աշխատասէր մշակը, նրա բնակիչների դաստիարակը: Որպիսի՞ խաղ անագորոյն բախտի, որպիսի մեծ փոփոխութիւն...